

# Մոլորակի բնական պաշարների նվազման հետևանքները միջպետական հարաբերություններում

**Շահվերդյան Ա. Մ.**

*Փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս, ՊԱՀՀ-ի հայցորդ (Երևան, Հայաստան) shahverdyan.arlen@gmail.com*

**Վճռորոշ բառեր՝** բնական պաշարներ, միջպետական հարաբերություններ, էկոլոգիական վնաս, կոնֆլիկտ, բնահամակարգ, միջազգային հանրություն, կոնֆլիկտ, քաղաքական մեղադրանքներ

## Последствия истощения природных ресурсов планеты в межгосударственных отношениях

*Шахвердян А. М.*

*Подполковник, старший преподаватель Центра Военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, соискатель в НИУО (Ереван, Армения) shahverdyan.arlen@gmail.com*

**Аннотация:** Последствия истощения природных ресурсов планеты проявляются сегодня в различных межгосударственных отношениях. Эти проблемы возникают между двумя или более государствами и часто приводят к конфликтам или обострению политических отношений. Это относится ко всем видам ресурсов дикой природы. Иногда угроза одной популяции или природному ресурсу может привести к межгосударственной напряженности, которая в свою очередь может привести к разрыву отношений, дипломатических связей и тд. Текущее состояние планеты и возможное ее будущее не позволяют делать оптимистичные прогнозы, так как доступные природные ресурсы сокращаются каждый день, есть большой риск огромного экологического ущерба. В этом контексте разработка и реализация новой экологической политики, направленной на разумное использование природных ресурсов, развитию и заботе о природе, позволит любому государству избежать межгосударственной напряженности и конфликтов из-за использования общих ресурсов.

**Ключевые слова:** природные ресурсы, межгосударственные отношения, экологический ущерб, конфликт, популяция, экологические проблемы, мировое сообщество, политические обвинения

## The Consequences of Depletion of the Planet's Natural Resources in Interstate Relations

*Shahverdyan A. M.*

*Lieutenant Colonel, Senior Lecturer, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Applicant, NDRU (Yerevan, Armenia) shahverdyan.arlen@gmail.com*

**Abstract:** The consequences of the depletion of the Planet's natural resources are manifested today in various interstate relations. These problems arise between two or more states and often lead to conflicts or aggravation of political relations. This applies to all types of wildlife resources. Sometimes a threat to one wildlife population or natural resource can lead to interstate tensions, which in turn can lead to the severance of relations, diplomatic ties, etc. The current state of the Planet Earth and its possible future do not allow making optimistic forecasts, since the available natural resources are shrinking every day, there is a great risk of huge environmental damage. In this context, the development and implementation of a new environmental policy aimed at the rational use of natural resources, development and care for nature will allow any state to avoid interstate tensions and conflicts over the use of common resources.

**Keywords:** natural resources, interstate relations, environmental damage, conflict, population, environmental problems, the world community, political accusations

Ելնելով նրանից, որ միայն առողջ ու մաքուր շրջակա միջավայրում է հնարավոր ծավալել այլ գործունեություններ, մեր համոզմամբ՝ էկոլոգիական անվտանգության խնդիրը, իր կարևորությամբ ու հրատապությամբ, գրեթե միշտ առաջին հորիզոնականում է, քանի որ պայմանավորում է մարդու կենսագործունեության

մյուս բոլոր ոլորտները, որովհետև անվնաս և մաքուր շրջակա միջավայր ունենալու, գոյության համար անհրաժեշտ մաքուր օդ շնչելու, մաքուր ջուր խմելու և անվնաս սնունդ օգտագործելու կենսական նշանակության խնդիրները ընդհանուր են բոլորի համար, առաջնային են ամբողջ մարդկության և կենդանի բնության համար: Այս

ամենն ավելի զգայուն ու կարևոր է դառնում հաշվի առնելով մոլորակի բնակչության թվի աճը, ռեսուրսների արագընթաց նվազումը, շրջակա միջավայրի աղտոտվածության անթույլատրելի ծավալները: Այդ խնդիրների լուծումները հաճախ պահանջում են քաղաքական վճռական որոշումներ և քաղաքական կամք ու պատրաստակամություն՝ այդ որոշումները լիարժեքորեն կյանքի կոչելու նպատակով:

Մի քանի պետության տարածքով անցնող որևէ խոշոր գետի աղտոտման՝ արդեն նշված օրինակը, ոչ միայն էկոլոգիական վնաս է բոլոր այդ պետությունների համար, այլև պահանջում է քաղաքական նոր շփումներ, հարաբերությունների նոր ձևաչափեր ու քաղաքական որոշումների կայացման նոր ջանքեր՝ բոլորին պատուհասած աղետը նվազեցնելու կամ կանխարգելելու համար: Կամ՝ բնական աղետները, ցունամիները, ջրհեղեղները զգալի վնաս են հասցնում ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի պետությունների բնակչությանը, ենթակառուցվածքներին, հետևաբար ձեռքբերելով ինչպես համապետական, այնպես էլ միջպետական նշանակություն և տրամաչափ: Պետության կամ պետությունների արդյունաբերական գործունեության հատկանքով բնությանը, շրջակա միջավայրին հասցված վնասի (աղտոտված ջուր, օդ և այլն), ինչպես նաև բնական աղետից (երկրաշարժ, ջրհեղեղ, ցունամի և այլն) տուժելու դեպքում զգալիորեն փոխվում է միջպետական արտաքին քաղաքականությունը, քանի որ պետությունները միավորվում են մեկ ընդհանուր, շատ ավելի գործալ խնդրի շուրջ: Հետևապես, էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրներն ազդում են ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական քաղաքական հարաբերությունների, քաղաքական պրոցեսների վրա, դառնում են պետությունների միջև յուրօրինակ կռվան, և դրանց լուծումը պահանջում է այդ պետություններին միավորող բանակցությունների նոր շրջափուլ:

Էկոլոգիական քաղաքականության վարման առումով այսօր աշխարհի պետությունների միջև գոյություն ունեն զգալի տարբերություններ: Այնպես որ առկա արդյունքները առայժմ շարունակում են հեռու մնալ ցանկալի արդյունքներից, որոնք կրեթեն իրապես կայուն զարգացման [1]:

Ավելին, այդ տարբերությունները երբեմն վերաճում են տարաձայնություններից, և միավորող գործոնից զատ, էկոլոգիական խնդիրները դառնում են նաև միջպետական, միջէթնիկական հարաբերությունների լրջորեն սրման, վատթարացման պատճառ՝ հասցնելով ընդհուպ մինչև զինված բախումների ու պատերազմների: Այդ բախումները կարող են պայմանավորված լինել ինչպես բնական պաշարների, դրանցով

հարուստ տարածքների յուրացման ձգտումով ու դրանից բխող մրցավազքով, այնպես էլ, օրինակ, մի պետության կողմից բնական պաշարների յուրացման կամ նվազեցման հետևանքով մեկ այլ պետության դժգոհությամբ ու դրանից բխող բախումով: Կենսական նշանակության բնական պաշարների համար մղվող մրցակցությունը, հանդիսանալով բախման պատճառ, կարող է այնքան խորանալ, որ ձեռք բերի լուրջ մասշտաբներ, հասնի պատերազմի:

Խնդիրն առավել արդիական է դառնում ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխության պայմաններում, երբ առաջ են եկել, պատերազմավարության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք հիբրիդային կամ անհամաչափ պատերազմներն են:

Թվում է, թե պաշարների նվազեցումը պետք է բերեր մարդկության միայն համախմբմանն ու համերաշխությանը, սակայն մինչ օրս ընթանում է դրա հակառակ գործընթացը:

Մարդկության զարգացումը բերել է նրան, որ որոշ բնական պաշարներ արդեն ծայրահեղ աստիճանի քիչ են և որոշ վայրերում գրեթե այլևս չեն վերարտադրվում ու վերականգնվում: Ուժային բևեռները լավ գիտակցում են այդ փաստը: Հետևաբար, երբ մի պետությունը կամ ուժը գիտակցում է, որ ինքը կարող է ռազմական կամ այլ ուժի ճանապարհով զավթել կամ պաշտպանել, տնօրինալ կամ վերահսկել բնական ռեսուրսները, ապա դիմում է դրան, ինչը հանգեցնում է բախման: Այդպիսի օրինակների մենք սկանառես ենք եղել, հատկապես, Մերձավոր Արևելքում, երբ ծավալված պատերազմների տնտեսական ծպտյալ դրդապատճառը եղել է, իրականում, խոշոր պետությունների կամ գերտերությունների կողմից տվյալ երկրի նավթահանքերին տիրանալը:

Կամ, օրինակ՝ այսօր խմելու ջուրը կռվան է հանդիսանում Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Կենտրոնական և Հարավային Ասիայի որոշ տարածաշրջաններում, որտեղ շատ պետություններ կիսում են ջրային պաշարները և հոգում իրենց կարիքները: Այդ պետություններում բնակչության թվի շարունակական աճը և տնտեսական զարգացումը բերելու են խմելու ջրի պահանջի մեծացմանը և հնարավոր է, որ ապագայում ուժի միջոցով պաշտպանվեն այն պաշարները, որոնց կարիքը կա:

Դարձյալ ջրի հետ կապված, սակայն ավելի ընդգրկուն խնդիր է ծովային ձկնարդյունահանումը, ինչը մրցակցության և ծովային, օվկիանոսային տարածքների վերահսկման է մղում շատ պետությունների, որոնց տնտեսական զարգացման հարցում ձկնարդյունաբերությունը շոշափելի տեղ է զբաղեցնում: Ավելին, ձկնային պաշարները շատ պետությունների հիմնական սննդային պաշարն են և մեծ

կարևորություն ունեն այդ երկրների ինչպես տնտեսության, այնպես էլ վարվող քաղաքականության մեջ, քանի որ հիմնականում այդ պաշարներով են ապահովվում բնակչության սնունդը: Այնպիսի ձկնային պաշարներ, ինչպիսին թյունոսն է, գտնվում են միջազգային ջրերում, սակայն կան նաև այնպիսիք, որոնք տեղային են, գտնվում են ափից որոշակի հեռավորության վրա և մտնում են տվյալ պետության ջրային սահմանների մեջ: Տարբեր տարիներին ձկնային պաշարների և դրանց արդյունահանման թույլտվության համար բախումներ են տեղին ունեցել, օրինակ, Մեծ Բրիտանիա և Իսլանդիայի (ընթացել է 1974-1976 թթ., այսպես կոչված «Ձողաձկան պատերազմ»), Կանադայի և Եվրոպական միության միջև (1992-1995 թթ., հակասություններ՝ կապված հյուսիսային՝ Ատլանտյան ձողաձկան (*Gadus morhua*) պաշարներից օգտվելու հետ: 1992 թ. Կանադան հայտարարել էր ձողաձկան որսի արգելում, որը հայտնի է «Ձողաձկան ճգնաժամ» անունով, ինչը ծագել էր ձկան այս տեսակի քանակի կտրուկ նվազումից, որը կարող էր բերել դրա լրիվ ոչնչացմանը): Ընդ որում, եթե Անգլիայի և Իսլանդիայի դեպքում խնդիրը, հիմնականում, առկա պաշարների օգտվելուն էր վերաբերվում (Իսլանդիան ցանկանում էր ընդլայնել վազառիկ տնտեսական գոտին, պաշտպանել իր ձկնային պաշարներն ու խուսափել ռեսուրսների հյուծումից, իսկ Անգլիան ապահովել իր ձկնային պաշարների անվտանգությունը), ապա Կանադա-ԵՄ բախման հիմքում կրկնակի խնդիր էր, որի հանգուցալուծումը ենթադրում էր քաղաքական որոշումների շարք և առկա պայմանագրերի խզում կամ վերանայում: Խնդիրը հասել էր նրան, որ Կանադայի և այլ պետությունների կողմից միմյանց հղվել էին դիվանագիտական նոտաներ և կողմերի կողմից ուժեղացվել էր ծովային տվյալ տարածքների հսկողությունը: Ծիշտ է, թե՛ Անգլիա-Իսլանդիա, թե՛ Կանադա-ԵՄ հակասությունները լուծվեցին խաղաղ ճանապարհով (1975 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջնորդությամբ), սակայն չկա երաշխիք, որ նոր քաղաքական ուժերի առկայության դեպքում, նույն պաշարների համար մրցակցությունը նոր և ավելի սուր բախումների պատճառ չի դառնա [2]:

1995 թվականին Մարոկկոյի և Իսպանիայի միջև ծագեց ձկնորսության հետ կապված մեկ այլ վեճ: Մարոկկոն ցանկանում էր պահպանել իր ձկնային պաշարները, ապահովել տեղի արդյունաբերության ընդլայնումը, մինչդեռ Իսպանիան ձգտում էր մուտք ունենալ ձկնային ռեսուրսներին, քանի որ բախվել էր լրջագույն ֆինանսական խնդիրների: Խնդիրը կարգավորվեց Եվրա-Միջերկրածովյան կոնֆերան-

սում (1995 թ.)՝ Մարոկկոյի, ԵՄ-ի և Միջերկրածովյան ավազանի երկրների մասնակցությամբ:

Նույն՝ 1995 թվականին Կանադայի և Իսպանիայի միջև «պատերազմ» ծագեց խաղաղօվկիանոսյան սպիտակաուս պալտուսի (*Hippoglossus stenolepis*) համար: Կանադայի նպատակն էր այս արդյունաբերական խոշոր ձկնատեսակի պաշտպանությունը, իսկ Իսպանիան պայքարում էր ձկանը Գրանդ բանկում [3] որսալու հնարավորության համար: Կողմերի միջև համաձայնությունը ձեռք բերվեց միայն Ատլանտիկայի հյուսիս-արևմտյան շրջանի Ձկնորսության կազմակերպության միջոցով: Նշենք ևս մեկ վեճ, որի մասնակիցներն են Չինաստանն ու Ինդոնեզիան և որը վերաբերում է Նատունա շրջանի նկատմամբ վերահսկողությանը<sup>1</sup>: Երկար տարիներ Ինդոնեզիայի առափնյա պահպանության ուժերը մի շարք օպերացիաներ են անցկացրել՝ պայքարելու համար չինական ձկնորսական նավերի ապօրինի ներթափանցման դեմ, այն դեպքում, երբ Պեկինը մշտապես պնդում է, որ ծովային այդ հատվածը գտնվում է իր ավանդական ձկնորսական շրջաններում: Ջակարտայի իշխանությունների որոշումը՝ Հարավ-չինական ծովի այս հատվածը վերանվանել Հյուսիսային Նատունայի ծովի, ցույց տվեց նրանց վճռականությունը՝ տարածքն իրենցը դարձնելու մտադրության մեջ՝ այդպիսով փորձելով պաշտպանել սեփական ձկնորսական շրջան ունենալու նրանց իրավունքը: Ինդոնեզիան փորձեց քաղաքական որոշման ճանապարհով ոչ միայն աշխարհագրական նոր անվանում դնել շրջանառության մեջ, այլև ըստ այդմ՝ հայտարարել իր իրավունքները տվյալ տարածքի վրա՝ համարելով չինական կողմի գործողությունները ոտնձգություն իր ինքնիշխանության նկատմամբ:

Այս շրջանի էներգետիկ և ձկնային պաշարների մեծ ծավալներն հաստատում են շահագրգիռ պետությունների հավակնությունները Նատունայի շրջանի հանդեպ, ինչպես նաև նրանց կողմից վարվող ակտիվ քաղաքականությունը: Վեճում շահող պետության համար

<sup>1</sup> Նատունան ինդոնեզիական Քեպուլաուն-Ռիաու պրովինցիայի շրջան է, որի կազմի մեջ մտնում են 272 կղզիներ: Դրանք գտնվում են Հարավ-չինական ծովում: Հյուսիսում շրջանը սահմանակցում է Վիետնամի և Կամբոջայի, հարավում՝ Հարավային Մումատրայի ու Չամբայի, արևմուտքում՝ Մալայզիայի, արևելքում՝ Արևելյան Մալայզիայի ու Արևմտյան Կալիմանտանի հետ: Շրջանը հարուստ է նաֆտի (14,3 մլրդ բարել) և բնական գազի (112,3 մլրդ խմ) մեծ պաշարներով (տես՝ “Kepulauan Natuna: ‘Bergeografikan Malaysia’ Berdaulatkan Indonesia” (<https://www.mstar.com.my/lain-lain/rencana/2013/12/07/kepulauan-natuna-bergeografikan-malaysia-berdaulatkan-indonesia>)):

բացվում է սեփական տնտեսական գոտին ընդլայնել՝ ավից ձգելով ու հասցնելով 200 ծովային մղոնի (370400 մ) [4]:

Հարկ է նշել, որ սույն աշխատության հեղինակը արդեն հրատարակված իր գիտական հոդվածներում [5; 6], գրական-բնապահպանական բլոգ-կայքի [7] նյութերում մշտապես անդրադարձել է էկոլոգիական խնդիրներին, մարդ-բնություն ներդաշնակ ու խաղաղ հարաբերության կարևորմանը: Եվ այս համատեքստում մշտապես նշել, թե ինչպես կարող է մարդու կողմից շրջակա միջավայրի վնասումը, կենդանիների ոչնչացումը ազդել մարդ-բնություն հարաբերության վրա: Մասնավորապես՝ հեղինակի «Ապրելու իրավունք» գիտազեղարվեստական մենագրական աշխատությունը, որն հրատարակվել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի («WWF-Հայաստան») աջակցությամբ, նվիրված է առյուծ (Panther leo) կենդանատեսակին և դրա այն խնդիրն, որ այս կենդանու՝ որպես խոտակերների թվաքանակը կարգավորող գիշատիչ կաթնասունի, թվաքանակի նվազման, արեալի կրճատման և պոպուլյացիայի վտանգման դեպքում մյուս կենդանատեսակների ու էկոհամակարգերի վրա բացասական ազդեցությունը, համաճարակների տարածման առումով դրա աղետալի հետևանքներն անխուսափելի են [8]:

Դարձյալ «WWF-Հայաստանի» աջակցությամբ տպագրված հեղինակի՝ «Լռության գինը» գիտազեղարվեստական, բնապահպանական գրքում խոսվում է նույն խնդրի մասին՝ կովկասյան (նաև՝ առաջավորասիական կամ պարսկական) ընձառյուծի (Panthera pardus ciscaucasica) օրինակով, որը խիստ հազվագույտ և վտանգված կենդանատեսակ է Կովկասում և հատկապես՝ Հայաստանում [9]: Հայաստանը Ադրբեջանի և Իրանի հետ չունի այս կենդանատեսակի պահպանմանն ուղղված պայմանագրեր, միջպետական մակարդակով չեն վերահսկվում ու պահպանվում այն տարանցիկ ուղիները, որոնցով ընձառյուծը, օրինակ, Իրանից ներթափանցում է Հայաստան: Կովկասյան ընձառյուծը, ըստ էության Եվրոպայի ամենամեծ կատվազգին է և այս բացառիկ ու հազվագույտ կենդանատեսակի պահպանությունը պատիվ ու հեղինակություն է բերում տարածաշրջանի ցանկացած պետության:

Ճիշտ է, 2019 թվականը ՀՀ Կառավարության կողմից հայտարարվել էր կովկասյան ընձառյուծի տարի, ձեռնարկվել էին կենդանատեսակի պահպանության միջոցներ՝ Շրջակա միջավայրի նախարարության և բնապահպանական միջազգային կազմակերպությունների հետ համատեղ, մասնավորապես «WWF-

Հայաստանի», խստացվել ու զգալիորեն մեծացվել էր որսագողության համար սահմանված դրամական տուգանքը: Ձեռնարկված քայլերի շնորհիվ 2020 թվականին կովկասյան ընձառյուծ էր նկատվել Տավուշի մարզում, Իջևանում:

Սակայն, այուամենայնիվ, մենք գտնում ենք, որ կովկասյան ընձառյուծի պահպանության համար Հայաստանը պետք է ձեռնարկի շատ ավելի զգալի միջոցներ: Խոսքը վերաբերում է ոչ միայն նրա ավար հանդիսացող բեզուարյան այծերի, հայկական մուֆլոնների թվաքանակի ավելացմանը և գիշատչի արեալի ու տեղաշարժի շջանների մեծացմանն ու անվտանգության ապահովմանը, այլև դրանց հնարավոր բազմացմանը:

Հարկ ենք համարում նշել, որ թեև հեղինակի նշված հետազոտություններում խոսվել է մեկ պոպուլյացիայի վտանգման դեպքում առաջ եկող բնապահպանական խնդիրների մասին, սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ անգամ մեկ պոպուլյացիայի վտանգման դեպքում առաջ են գալիս ոչ միայն էկոլոգիական, այլև քաղաքական, տնտեսական խնդիրներ, դառնալով ներպետական կամ արտապետական հիմնախնդիրներ:

Առավել ևս, որ միջազգային, այդ թվում՝ միջպետական, միջէթնիկական բախումները, չեն վերաբերում միայն կենդանական աշխարհի ռեսուրսների նվազմանը կամ դրանց տնօրինման պայքարին, այլև մղվում են ընդերքի հարստությունների համար: Այս համատեքստում բերենք մեկ օրինակ՝ Օգադենյան հակամարտությունը (1963-1964 և 1977-1978) Եթովպիայի և Սոմալիի միջև: Սոմալիի հովիվները սպրում ու տեղաշարժվում են Քենիայով, Եթովպիայով և Ջիբութիով, բնականաբար ծագել էր արոտավայրի և ջրի իրավունքի հարց: Եթովպիան էլ, իր հերթին, անհանգստանում էր իր բնակիչների անվտանգության համար: Խնդիրը առավել լրջացավ, երբ ակնհայտ էր, որ հարցը միայն արոտավայրերն ու ջուրը չեն, այլև հասանելիությունը նավթի պաշարներին: Պայքարը գնալով սրվեց՝ վերածվելով արդեն տարածքային վեճի: Տեղի ունեցավ օհադենյան սպաստամբությունը եթովպական կառավարության դեմ (1963), մինչև 1964 թվականը սպանվեցին միքանի հարյուր մարդ, իսկ 1978-ին Սոմալին պարտվեց տարածքային պայքարում [10]:

Նշված օրինակները ցույց են տալիս, որ ըստ էության, բնական՝ կենդանական, բուսական, ընդերքի պաշարների սակավության պայմաններում խնդիրը շատ արագ էկոլոգիականից կարող է վերածվել քաղաքականի:

Այսօր աշխարհում էկոլոգիական անվրտանգության խնդիրները առաջ են բերում քաղաքական նոր իրողություններ և զար-

գացումներ, իսկ այդ խնդիրների լուծման նպատակով առաջանում է քաղաքական նոր որոշումների կայացման անհրաժեշտություն, բնապահպանականից դեպի նոր տիպի քաղաքական խնդիրների լուծման կամք՝ ինչպես ներքին և արտաքին քաղաքական շրջանակներում, այնպես էլ միջպետական քաղաքական հարաբերություններում, սոցիալական, տնտեսական, տեղեկատվական, ժողովրդագրական և այլ տիրույթներում:

Այս իմաստով բնական պաշարների խելամիտ օգտագործմանը և բնության նկատմամբ խնամքով վերաբերմունքին միտված էկոլոգիական նոր քաղաքականության մշակումը և վարումը ցանկացած պետության համար հնարավորություն կտա հնարավորինս զերծ մնալ ընդհանուր պաշարների օգտագործման պատճառով տեղի ունեցող միջպետական լարումներից և բախումներից:

### Օգտագործված գրականություն ցանկ

1. **Вебер А. Б.**, «Экология и общественное сознание: Трудный путь к устойчивому развитию» (<https://cyberleninka.ru/article/n/ekologiya-i-obschestvennoe-soznanie-trudnyy-put-k-ustoychivomu-razvitiyu>):
2. **Terriff, Terry** Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan, Security Studies Today, York House Typographic Ltd, London, 2002, PP 115-134:
3. **Riggs Bert**. “Grand Bank” In Joseph R. Smallwood, ed. Encyclopedia of Newfoundland and Labrador. Vol. 2. St.John's: Newfoundland Book Publishers (1967) Ltd., 1984, p.677:
4. **Claudia Astarita**, “Southern and Eastern Asia”. Osservatorio Strategico. 2019, Issue 2. Published by Center for High Defence Studies and Military Center for Strategic Studies. PP. 81-87 (էլեկտրոնային հարթակը՝ [https://www.difesa.it/SMD\\_/CASD/IM/CeMiSS/Pubblicazioni/OsservatorioStrategico/2019/Pagine/OS\\_02\\_2019.aspx?lang=en](https://www.difesa.it/SMD_/CASD/IM/CeMiSS/Pubblicazioni/OsservatorioStrategico/2019/Pagine/OS_02_2019.aspx?lang=en)):
5. **Շահվերդյան Ա. Մ.**, «Բնապահպանական անվտանգության որոշ հարցերի դիտարկումը քաղաքական գիտության տեսանկյունից»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010, հմ. 2, էջեր 79-92,
6. **Շահվերդյան Ա. Մ.**, «Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա: Հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010, հմ. 4, էջեր 103-112:
7. Առլեն Շահվերդյանի գրական, բնապահպանական բլոգ-կայք (<http://arlen Shah.wordpress.com>):
8. **Շահվերդյան Ա. Մ.**, «Առյուծ կենդանատեսակի պահպանությունը բնապահպանական անվտանգության ապահովման համատեքստում: Բնապահպանական անվտանգությունը որպես Երկիր մոլորակի բնության պահպանության համամարդկային հիմնախնդիր», «Ապրելու իրավունք», Երևան, 2011, էջեր 16-20:
9. **Շահվերդյան Ա. Մ.**, «Բժավոր տեսիլքը», «Լռության գինը», Երևան, 2014, էջեր 39-90:
10. **Cooper Tom**. Ogaden War, 1977-1978 ([https://web.archive.org/web/20100111060853/http://s188567700.online.de/CMS/index.php?option=com\\_content&task=view&id=140&Itemid=47](https://web.archive.org/web/20100111060853/http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=140&Itemid=47)):

Շժանա/Հանձնվել է՝ 08.09.2020

Քեցենզիրօվանա/Գրախոսվել է՝ 10.09.2020

Քրինյատա/Ընդունվել է՝ 12.09.2020